ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմը հայտարարում է բաց մրցույթ «Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի և **«Դսեղի առողջության կենտրոն»** ՊՈԱԿ-ի տնօրենների թափուր **պաշտոնները զբաղեցնելու համար**

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմը հայտարարում է մրցույթ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության՝ հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս **«Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» և «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ների** տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար:

Կազմակերպության թափուր պաշտոնը կարող է զբաղեցնել ՀՀ այն գործունակ չափահաս քաղաքացին, ով ունի

1. բարձրագույն բժշկական կրթություն և հանրային ծառայության առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ կամ առողջապահական բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, չի լրացել 65 տարին:

Մրցույթները կանցկացվեն՝

«Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար՝

2026 թվականի հունվարի 23-ին ժ. 11:00-ին:

«Դսեղի առողջության կենտրոն»ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար՝ **2026 թվականի հունվարի 23-ին ժ. 15:00-ին**

Մրցույթին մասնակցելու համար ՀՀ քաղաքացիները ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ են ներկայացնում՝

1) դիմում, որում նշվում է հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), հաշվառման և բնակության վայրը, հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն (դրանց առկայության դեպքում).

2) մեկ լուսանկար 3 x 4 չափի.

3) աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.

4) ինքնակենսագրություն.

5) անձը հաստատող փաստաթղթի և հանրային ծառայության համարանիշի պատճեն.

6) բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի հավակնորդի դեպքում՝ նաև պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու կամ տարկետման մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթղթի) պատճեն.

7) տեղեկանք՝ դատվածության, դատվածությունը հանված կամ մարված լինելու վերաբերյալ (Արտաքին գործերի նախարարությունից).

8) տեղեկանք՝ սնանկության կամ դրա բացակայության վերաբերյալ (Պետական եկամուտների կոմիտեից).

9) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիվանդությունների բացակայության վերաբերյալ. (արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունից, որտեղ համապատասխան կարգով կցագրված է դիմումատուն).

10) հավակնորդի ցանկությամբ՝ հրատարակված գիտական հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

11) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (ըստ դիմումատուի ցանկության).

12) Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգը (**ներկայացվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ**, ինչի վերաբերյալ կազմվում է հանձնման-ընդունման ակտ), որը ներառում է Կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև Կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, Կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները:

Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է առձեռն կամ առցանց՝ բացառությամբ Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգի, որը ներկայացվում է առձեռն:

Առձեռն փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, բացի ոչ աշխատանքային օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2025 թ. դեկտեմբերի 22-ը:

Մրցույթը կկայանա ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի շենքում /գտնվելու վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ 1/: Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ, առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն, հեռախոս 0322-4-02-66/: